

Միբիրախտ

Միբիրախտը սուր ընթացքով վարակիչ հիվանդություն է, որը բնորոշ է սեպտիցեմիայով, օրգանիզմի թունավորումով և մարմնի տարբեր հատվածներում կարբունկուլների (այտուցների) առաջացումով:

Հարուցիչը աերոբ, գրամդրական, սպոր և պատիճ առաջացնող, անշարժ ցուպիկ է: Հիվանդ կենդանիների օրգանիզմում և բնական սպիտակուցով ու ածխաթթու գազով հարուստ արհեստական սննդային միջավայրում հիվանդության հարուցիչը առաջացնում է արտահայտված պատիճ: Հարուցիչը իր տեսակը պահպանելու համար գոյության անբարենպաստ պայմաններում մթնոլորտային թթվածնի պարտադիր առկայության դեպքում սպորավորվում է: Սպորագոյացում չի կատարվում չդիախեռված դիակում:

Համաճարակաբանական տվյալները

Միբիրախտի նկատմամբ առավել զգայունակ են եղջերուները, այնուհետև ըստ զգայունակության աստիճանի հետևյալ կենդանիները՝ ոչխարներ, այծեր, խոշոր եղջերավոր անասուններ, ձիեր, բիզոններ, այծեղջյուրներ, գոմեշներ, խոզեր, ուղտեր: Գիշատիչ կենդանիներից հատկապես զգայունակ են սամույրները, ջրաքիսները, ջրարջերը, համեմատաբար թույլ զգայունակությամբ են օժտված կատուները, շները, գայլերը, աղվեսները, բևեռաղվեսները: Նկարագրված են արջերի, փղերի, առյուծների, վագրերի անկումների մասին: Միբիրախտի նկատմամբ զգայունակ են նաև մարդիկ:

Կենդանիների վարակումը կատարվում է տարբեր ուղիներով: Ինֆեկցիայի հարուցիչները թափանցման հիմնական ճանապարհը այն է, երբ սպորները կամ բացիլները կենդանու օրգանիզմ են անցնում կերի կամ ջրի միջոցով: Բերանի խոռոչի և ըմպանի լորձաթաղանթների ամբողջականության խախտման, ատամների փոխման և ստամոքս-աղիքային ուղիների լորձաթաղանթների բորբոքումների դեպքում բարձրանում է վարակման և հիվանդանալու հավանականությունը: Միբիրախտի հարուցիչը օրգանիզմ է ներթափանցում նաև ամբողջականությունը խախտված մաշկի միջոցով, մանավանդ թարմ քերծվածքների դեպքում, ինչպես նաև ակտիվ ճանապարհով, որը առավելապես դիտվում է ոչխարների մոտ, երբ նրանք քշում են վարակված տեղանքով: Հիվանդության տարածման գործում մեծ դեր են խաղում նաև արյունածուծ միջատները, հատկապես գոռեխները, շնաճանճերը, մոծակները, որոնք վարակը տարածում են ոչ միայն հիվանդ կենդանիներից, այլև դիակներից, վարակված ջրամբարներից, հողից: Հիվանդությունը սովորաբար արձանագրվում է տարվա տաք եղանակներին, աղքատ և չոր բուսածածկով արոտավայրերում: Մսուրային շրջանում ևս հնարավոր են հատուկենտ բռնկումներ, երբ օգտագործում են սիբիրախտի սպորներով վարակված անասնակեր:

Կախված հիվանդության հարուցչի փոխանցման բազմապիսի գործոնների առկայությունից և տարվա եղանակից՝ համաճարակի ինտենսիվությունը կարող է դրսևորվել սպորադիկալից (հատուկենտ բռնկումներ) մինչև տեղաճարակային, երբեմն էլ համաճարակային (էպոդիտիա) ձևերով: Սովորաբար վերջինը արձանագրվում է արոտային պահվածքի դեպքում, երբ առկա են վարակի փոխանցման կենդանի և անկենդան նյութի ձևերը: Ի տարբերություն համաճարակի ինտենսիվության այսպիսի տատանումների, հիվանդ կենդանիների մահացությունը հասնում է 80 – 100%-ի:

Հիվանդության հարուցիչի աղբյուր են հանդիսանում ինֆեկցիոն պրոցեսի տարբեր ընթացքներում գտնվող հիվանդ կենդանիները, որոնց օրգանիզմից բացիլները արտաքին միջավայր են արտազատվում մեզի, կղկղանքի, թքի և կաթի միջոցով: Մանրէները հատկապես մեծ քանակությամբ արտազատվում են հոգեվարքում գտնվող կենդանիների բնական անցքերից հոսող փրփրախառն արյունային հեղուկների միջոցով: Հարուցիչի փոխանցման կարևոր գործոնը սիբիրախտից սատկած կենդանիների դիակն է, որի օրգան–համակարգերը, ներքին հեղուկ միջավայրը պարունակում են մեծ քանակությամբ բացիլներ: Քանի որ բացիլների սպորագոյացումը իրականացվում է թթվածնի առկայության պայմաններում, ուստի այդ պրոցեսը և նրա տարածումը կանխելու նպատակով արգելվում է դիահերձում կատարել: Կան տվյալներ այն մասին, որ լաբորատոր փոքր կենդանիների մոտ սիբիրախտի մանրէները ոչ միայն կարող են ինտենսիվորեն բազմանալ և բարձրացնել իրենց վարակայնությունը, այլև առաջացնել սպորներ: Հարուցիչները կարող են տարածվել նաև սիբիրախտով հիվանդ կենդանիների հարկադիր մորթվածների մսի, կաշվի, բրդի, ոսկորների միջոցով: Մեծ տարածությունների վրա կարող է տարածվել վարակված կերերի տեղափոխման ժամանակ: Էական վտանգ են ներկայացնում ամենակեր կենդանիները և գիշատիչ թռչունները, որոնք չնայած չեն հիվանդանում, սակայն ուտելով դիակները՝ վարակվում են և երկար ժամանակ սպորներն արտազատում կղկղանքով:

Ընթացքը և նշանները

Սիբիրախտի կլինիկական նշանները և ընթացքը կախված են հիվանդության հարուցիչի՝ օրգանիզմ թափանցելու ուղիներից, կենդանու տեսակից և անհատական զգայունակությունից, մանրէի վարակունակությունից և դրա բաժնեչափից, գաղտնի շրջանի տևողությունից և համաճարակային պրոցեսի ժամկետներից:

Հիվանդության *գաղտնի շրջանը* տևում է 1-3 օր, որի ընթացքում հյուսվածքներում հարուցիչը հարմարվում, բազմանում և արտադրում է թույներ, այնուհետև ռետիկուլա-էնդոթելային համակարգի բջիջներից բացիլներն ազատվում են և առաջացնում ինֆեկցիայի երկրորդային օջախներ: Ըստ ախտաբանական պրոցեսի տեղադրման՝ տարբերվում են հիվանդության մաշկային, աղիքային, թոքային և անզինոզային ձևերը:

Միբիրախտի **կարբունկուլյոզային ձևը** ուղեկցվում է մաշկի, ենթամաշկային հյուսվածքների ու լորձաթաղանթների այտուցներով, որը հնարավոր է սուր և ենթասուր ընթացքի դեպքում: Մարմնի տարբեր մասերում առաջացող այտուցային տաք, պինդ և ցավազգաց ուռուցքները շուտով դառնում են անցավազգաց, սառը և խմորանման: Ուռուցքի կենտրոնական մասում կարող է սկսվել մեռուկացում և հյուսվածքների խոցավարում:

Աղիքային ձևն արտահայտվում է մարսողական օրգանների խանգարումով, իսկ սեպտիցեմիայի պայմաններում, հատկապես ձիերի մոտ, լինում են ծակոցներ, կապ, այնուհետև՝ արյունային փոքրիւծ:

Հիվանդության թոքային ձևը բնորոշ է արագ զարգացող թոքերի արյունային բորբոքումով և այտուցով: Աերոզենային վարակման դեպքում այս ձևը կարող է առաջանալ սիբիրախտի նկատմամբ բոլոր ընդունակ կենդանիների մոտ:

Անգինոզային ձևն առավելապես դիտվում է խոզերի մոտ: Այն բնորոշ է երկարատև ընթացքով, մարմնի ջերմաստիճանի կարճատև բարձրացումով մինչև 40.5 – 41°C, ըմպանի և կոկորդի լորձաթաղանթների բորբոքումներով, պարանոցի այտուցավորումով: Կենդանիները հազում են, դժվարանում է շնչառությունը և կուլ տալու ընթացքը: Ըմպանի և կոկորդի ուժեղ այտուցից կենդանիները կարող են սատկել շնչահեղձությունից: Երբեմն այս նշանները թույլ են արտահայտվում և սիբիրախտի նկատմամբ կասկած է առաջանում միայն խոզերի մսեղիքի հետսպանդային ստուգման ժամանակ:

Ախտորոշումը

Անհրաժեշտ է հաշվի առնել համաճարակաբանական տվյալները, կլինիկական նշանները և ախտաբանաանատոմիական զննման արդյունքները: Միբիրախտի նկատմամբ նախկինում անապահով տարածքներում, արոտային շրջանում կամ հողային աշխատանքներից, ջրհեղեից հետո կենդանիների հանկարծակի անկումները հիմք են տալիս կասկածելու այդ հիվանդության նկատմամբ: Կարևորվում է նաև ինֆեկցիայի ծանր ընթացքը, սեպտիցեմիան, տենդը, կարբունկուլների (այտուցների) առկայությունը, իսկ խոզերի մոտ նաև անգինոզային ձևը, դիակների արագ քայքայումը, նրանց փայտացման բացակայությունը, բնական անցքերից արյունահոսությունը, արյան դժվար մակարդելիությունը և այլ փոփոխություններ: Այս բոլորը կարող են միայն կասկած հարուցել հակասիբիրախտային կանխարգելիչ միջոցառումների անցկացման համար: Հիվանդության վերջնական ախտորոշումը հաստատվում է լաբորատոր հետազոտությունների արդյունքներով:

Բուժումը

Միբիրախտի դեպքում կենդանիներին մեկուսացնում են: **Հերձումը չի թույլատրվում հիվանդության գոռանթրոպոնոզ և խիստ կոնտազյոզ լինելու պատճառով:**

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները

Հակասիբիրախտային կանխարգելիչ միջոցառումները իրականացնում են ընկալունակ կենդանիների պատվաստումով, հիվանդության ,հողային օջախներից հաշվառումով և նրանց վերացումով, սանիտարասահմանափակիչ և բարտասական աշխատանքներով: Անհրաժեշտ է դադարեցնել առանց անասնաբույժի թույլտվության կենդանիների սպանողը, պահպանել դիակների օգտահանման, հավաքման և ոչնչացման կանոնները: Այն տեղանքը, որտեղ նկատվել են կենդանիների հիվանդության, անկման, ինչպես նաև թաղման դեպքեր, պետք է գրանցվեն և մեկուսացվեն: Կենսաջերմային հորերը, անասնագերեզմանոցները, անասնաբակերը, ամառային ճամբարները և այլն անհրաժեշտ է ախտահանել քիմիական, ֆիզիկական, կենսաբանական մեթոդներով, ցանկապատել վարակված տարածքները, աճեցնել փշատերև թփուտներ: Վարակված տեղանքի վարակազերծման արդյունավետությունը որոշելու, ինչպես նաև սպառնալիքի տարածքից կատարում են հողի նմուշի մանրէաբանական հետազոտություն: Միբիրախտի նկատմամբ անապահով կետերում և սպառնալիքի գոտիներում իրականացնում են հիդրոմելիորատիվ, շինարարական և այլ հողային աշխատանքների կատարմանը ներկայացվող անասնաբուժասանիտարական պահանջները:

Այն բոլոր տարածքներում, որոնք անասնաբուժական օրգանների կողմից սիբիրախտի նկատմամբ ճանաչվել են վտանգավոր, յուրաքանչյուր տարի անց են կացնում ընկալունակ կենդանիների պատվաստում այդ վարակի դեմ: Եթե մեծ է վարակման վտանգը, պետք է ամբողջ հասակավոր խոշոր եղջերավոր անասուններին պատվաստել տարին 2 անգամ՝ գարնանը և աշնանը: Մատղաշին առաջին անգամ պատվաստում են 3 ամսական հասակում և վերապատվաստում 6 ամիս անց, իսկ այնուհետև՝ ինչպես հասակավորներին: Ոչխարներին, այծերին, ձիերին, ուղտերին պատվաստում են տարեկան մեկ անգամ՝ աշնանը, իսկ խոզերին պատվաստում են միայն ճամբարային և ազատ պահվածքի դեպքում: Գարնանային պատվաստումների ժամկետների որոշման դեպքում պարտադիր կարգով հաշվի են առնում կենդանիների բովանդության աստիճանը: Իմունացումը կատարում են արոտավայր տանելուց և նորմալ իմունաբանական հակազդման վերականգնվելուց հետո: Կանխարգելիչ կարանտինացման ժամանակ, երբ համալրում են ֆերմաները, գնված բոլոր կենդանիներին պատվաստում են: Կենդանիների սպանողը պատվաստումից հետո թույլատրվում է 14 օր հետո:

Եթե սիբիրախտ է բռնկվել տնտեսությունում, ֆերմայում, արոտավայրի տեղամասում, կենդանական հումք վերամշակող ձեռնարկությունում, անմիջապես

սահմանվում է կարանտին: Արգելվում է կենդանիների ներմուծումը և դուրս բերումը, վերախմբավորումը, մսի համար սպանդը, անասնապահական հումքի մթերումը և արտահանումը: Բոլոր ընկալունակ կենդանիներին հետազոտում են, հիվանդ և հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիներին մեկուսացնում են և բուժում, իսկ առողջացումից 14 օր հետո պատվաստում սիբիրախտի նկատմամբ: Չի թույլատրվում հարկադիր սպանդի ենթարկել սիբիրախտով հիվանդ կենդանուն: Վարակման մեջ կասկածվող կլինիկական առողջ կենդանիներին անմիջապես պատվաստում են: Հիվանդ և հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների կաթը վնասազերծում են և ոչնչացնում, իսկ վարակման մեջ կասկածվողներինը թույլատրվում է օգտագործել սննդի մեջ միայն եռացնելուց հետո:

Սիբիրախտից ընկած կենդանու դիակը ոչնչացնում են այրելու միջոցով: Խիստ **արգելվում է դիակի թաղումը**, քանի որ հողի մեջ ստեղծվում են կայուն օջախներ: Հիվանդ կենդանիների կամ դիակի ընկած տեղը ախտահանում են 10%-ոց կծու նատրիումի, 5% ակտիվ քլոր պարունակող քլորակրի կամ 4% ֆորմալդեհիդի լուծույթներով: Կերերի մնացորդները, ցածրարժեք գույքը, գոմաղբը հավաքում են և այրում:

Անապահով կետից կարանտինը վերացնում են վերջին հիվանդ կենդանու անկումից կամ առողջացումից 15 օր անց, եթե կատարվել է եզրափակիչ ախտահանություն, անասնաշենքի սանիտարական վերանորոգում, ինչպես նաև կենդանիների մոտ բացակայում են հետվակցինացման բարդացումները:

Եթե սիբիրախտի դեպք է արձանագրվում մսի կոմբինատում կամ սպանդանոցներում, ապա դադարեցնում են կենդանիների հետագա սպանդը և անցկացնում հիվանդության հարուցիչի վնասազերծման միջոցառումներ: Մթերման ենթակա, ոչ սպանդանոցային ծագման մուշտակային և կաշեհումքը պարտադիր կարգով անասնաբուժական լաբորատորիաներում պետք է պրեցիպիտացիայի ռեակցիայով ստուգվի սիբիրախտի նկատմամբ:

Հումքի օգտագործումը

Հիվանդ կենդանիների սպանդը արգելվում է: Դիակներն ամբողջությամբ պետք է ոչնչացվեն այրմամբ: Ինչպես արդեն նշվել է, հիվանդ և հիվանդության նկատմամբ կասկածվող կենդանիների կաթը վնասազերծում են և ոչնչացնում, իսկ վարակման մեջ կասկածվողներինը թույլատրվում է օգտագործել սննդի մեջ միայն եռացնելուց հետո: